ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-23/39 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով «Ներառական կրթության համակարգի ներդրում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում գույքի (աթոռներ, գրապահարաններ) գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Հայտերի բացման նիստը տեղի ունեցավ 13.02.2022թ. ժամը 15:00-ին էլեկտրոնային գնումների e-auctions համակարգի միջոցով:

Գնահատող հանձնաժողովի կազմը.

Հանձնաժողովի նախագահ՝ Արսեն Բաղդասարյան
Հանձնաժողովի անդամ՝ Սյուզաննա Առստամյան
Հայկուհի Ադամյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Արսեն Սողոմոնյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 Ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Էլ. Հասցեները
1	Ա/Ձ Կարեն Գևորգյան	kargevklan2012@mail.ru
2	«Ֆոտոն» ՍՊԸ	ms.foton2014@mail.ru
3	«ԼԵՈ Ա» ՍՊԸ	mcandfriendo@gmail.com
4	«Ույուտ Սենթր» ՍՊԸ	uyut-centr@mail.ru
5	«ՎԱՆԴԵԿՈՐ» ՍՊԸ	vandekorltd@gmail.com
6	ԱՁ Լուսինե Ղազարյան	arm.production@mail.ru
7	«ԳԱՅԱՆԵ ԲԱԲԼՈՅԱՆ ԱՐՇԱՎԻՐԻ Ա/Ձ»	tevanyanpaylak@gmail.com

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

3.1 Ընթացակարգով կայացած հակադարձ աճուրդի արդյունքում մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Հ/Հ	Նախահաշ-վային գինը, ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները													
		Ա/Ձ Կարեն Գևորգյան		«Ֆոտոն» ՍՊԸ		«ԼԵՈ Ա» ՍՊԸ		«Ույուտ Սենթր» ՍՊԸ		«ՎԱՆԴԵԿՈՐ» ՍՊԸ		ԱՁ Լուսինե Ղազարյան		«ԳԱՅԱՆԵ ԲԱԲԼՈՅԱՆ ԱՐՇԱՎԻՐԻ Ա/Ձ»	
		Վերջնական առաջարկված գինը, ՀՀ դրամ													
		Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն
1	3982860	4000000	4000000*	9957150	11948580*	144000000	172800000*	-	-	-	-	-	-	-	-
2	3360000	3168000	3168000	2200000	2640000	144000000	172800000*	3036000	3036000	3201000	3201000	3300000	3300000	3360000	4032000*

*Մասնակցի գնային առաջարկը գերազանցում է նախահաշվային գինը:

4. Հակադարձ աճուրդի արդյունքում, յուրաքանչյուր չափաբաժնի մասով, համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության, հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և ներկայացված փաստաթղթերի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանության մասին.

4.1 «Ֆոտոն» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը 2-րդ չափաբաժնի մասով կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան, հայտում առկա են պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

4.2 «Ֆոտոն» ՍՊԸ-ի հայտը 2-րդ չափաբաժնի մասով չի համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես՝

4.2.1 առաջարկվող ապրանքի տեխնիկական-բնութագրերը /ապրանքի ամբողջական նկարագիրը/ հստակ չէ, չի ներկայացվել կոնկրետ մատակարարվող ապրանքի տեխնիկական բնութագիրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

4.2.2 գնային առաջարկը ներկայացված է ավելացված արժեքի հարկը ներառված, այն դեպքում, երբ հրավերով պահանջվում էր գնային առաջարկը ներկայացնել առանց ավելացված արժեքի հարկի, քանի որ գնման ենթակա ապրանքներն ազատվում են ԱԱՀ-ից՝ համաձայն «ՀՀ կառավարության և ԱՄՆ կառավարության միջև համագործակցության վերաբերյալ մարդասիրական և տեխնիկական տնտեսական օգնության վերահսկումը հեշտացնելու մասին» 1992թ. դեկտեմբերի 15-ին ստորագրված համաձայնագրով նախատեսված հարկային, մաքսային և պարտադիր վճարների արտոնություններից օգտվելու մասին» ՀՀ օրենքի և E-auction համակարգում տեխնիկապես հնարավոր չէ պայմանագիրը շնորհել առանց ԱԱՀ-ի, ուստի հայտը ենթակա է մերժման:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

5. Տվյալներ առաջին տեղ զբաղեցրած, այդպիսին չճանաչված և մերժված մասնակիցների վերաբերյալ.

5.1 **Ա/Ձ Կարեն Գևորգյանի, «Ֆոտոն» ՍՊԸ**-ի և **«ԼԵՈ Ա» ՍՊԸ**-ի հայտերը 1-ին չափաբաժնի մասով մերժվել են համակագի կողմից՝ գնային առաջարկները նախահաշվային գինը գերազանցելու հիմքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

5.2 Հիմք ընդունելով սույն արձանագրության 4.2.2 ենթակետը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը՝ մերժել «Ֆոտոն» ՍՊԸ-ի հայտը 2-րդ չափաբաժնի մասով՝ հրավերի պայմաններին չհամապատասխանելու հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

5.3 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2017թ թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը՝ 2-րդ չափաբաժնի մասով մերժել **Ա/Ձ Կարեն Գևորգյան**ի, **«Ոյուտ Սենթր» ՍՊԸ-ի, «ՎԱՆԴԵԿՈՐ» ՍՊԸ**-ի և **ԱՁ Լուսինե Ղազարյան**ի հայտերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

5.4 **«ԳԱՅԱՆԵ ԲԱԲԼՈՅԱՆ ԱՐՇԱՎԻՐԻ Ա/Ձ»-ի** և **«ԼԵՈ Ա» ՍՊԸ**-ի հայտերը 2-րդ չափաբաժնի մասով մերժվել են համակագի կողմից՝ գնային առաջարկները նախահաշվային գինը գերազանցելու հիմքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

6. Գնահատման արդյունքների մասին

6.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, գնման գործընթացը 1-ին չափաբաժնի մասով հայտարարել չկայացած՝ հայտերից ոչ մեկը հրավերի պայմաններին չհամապատասխանելու հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

6.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը՝ գնման գործընթացը 2-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած, պայմանագիր չի կնքվում հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

6.3 Հրապարակել գնման ընթացակարգը 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

---------- Արսեն Բաղդասարյան

---------- Սյուզաննա Առստամյան

---------- Հայկուհի Ադամյան

---------- Արսեն Սողոմոնյան /քարտուղար/